

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ

Հայաստանի կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման ծրագիր

Հայաստանի Հանրապետության և Համաշխարհային բանկի համագործակցության շրջանակներում «Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագիրը» մեկնարկել է 2013 թվականին և իրականացվում է համաձայն հետևյալ երեք վարկային համաձայնագրերի՝

- 2013թ. փետրվարի 11-ին կնքված թիվ 8229 AM համաձայնագիր՝ «Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման» ծրագիր (ԿՆՃՑԲ ծրագիր)
- 2015 թվականի օգոստոսի 26-ին կնքված թիվ 8523 AM համաձայնագիր՝ «Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» ծրագիր (ԿՆՃՑԾ ԼՖ ծրագիր)
- 2019 թվականի հոկտեմբերի 10-ին կնքված թիվ 8957 AM համաձայնագիր՝ «Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի երկրորդ լրացուցիչ ֆինանսավորում» ծրագիր (ԿՆՃՑԾ ԼՖ2 ծրագիր)

Ծրագրի ավարտման ամսաթիվն է 2022թ. դեկտեմբերի 31-ը:

Ծրագիրը ներառում է երկու հիմնական բաղադրիչներ՝ կենսական նշանակության ճանապարհների բարելավում և ծրագրի կառավարում և ինստիտուցիոնալ կարողությունների հզորացում: ԿՆՃՑԲ և ԿՆՃՑԾ ԼՖ ծրագրերի ծրագրային գործողություններն ավարտվել են: ԿՆՃՑԾ ԼՖ2 ծրագիրն ընթանում է գործողությունների նախանշված պլանին համապատասխան:

Բաղադրիչ 1. Կենսական նշանակության ճանապարհների բարելավում

ԿՆՃՑԲ և ԿՆՃՑԾ ԼՖ ծրագրերի շրջանակներում հիմնանորոգվել են 392,5կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհներ (2013-2017թթ.՝ ԿՆՃՑԲ ծրագիր – 211,41կմ և 2016-2020թթ.՝ ԿՆՃՑԾ ԼՖ ծրագիր - 181.05կմ) :

ԿՆՃՑԲԾ ԼՖ2 ծրագրի շրջանակներում, 68,74կմ ընդհանուր երկարությամբ 12 ճանապարհների վերականգնման աշխատանքների մեկնարկը տրվել է 2020թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին: 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 12 ճանապարհներից արդեն իսկ հիմնանորոգվել և շահագործման են հանձնվել **10-ը** (ընդհանուր **55,84կմ**): Երկու ճանապարհահատվածը (**12.9կմ**) նախատեսվում է շահագործման հանձնել 2022թ.:

Ծրագրի սույն բաղադրիչը ներառում է նաև՝

- Ճանապարհների հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական աուդիտ
- Ճանապարհների «Մև կետերի» (վթարավտանգ տեղամասեր) բարելավում
- Երթևեկության նշանների տեղադրում
- Երթևեկության հաշվիչների տեղադրում

Բաղադրիչ 2. Ծրագրի կառավարում և ինստիտուցիոնալ կարողությունների հզորացում

Սույն բաղադրիչով նախատեսված հետևյալ ծրագրային դրույթների մի մասը ավարտվել է, իսկ մյուս մասն ընթանում է նախանշված գործողությունների պլանի համաձայն: Մասնավորապես՝

- Ճանապարհային գույքի կառավարման համակարգ և տվյալների հավաքագրում
- Կենսական նշանակության ճանապարհային ցանցի զարգացման պլանի մշակում
- Վթարների տվյալների հավաքագրման ու կառավարման համակարգի ներդրում
- Ճանապարհային անվտանգության մասով կրթելու և հանրության իրազեկման արշավ
- Սոցիալական մոնիտորինգի և գնահատման ուսումնասիրություն
- Ճանապարհային ենթակառուցվածքներում բնական աղետների ռիսկերի գնահատում
- Կատարողականի վրա հիմնված պայմանագրերի փորձնական կիրառում
- Պրակտիկանտների հավաքագրում